



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

281.69
U-15

1-2

09-Nov-
2009



281.69
U-15



ՅԱՅՏՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

ՀՐԱՏ. ՅՈՎՃԱՆԻՔ ԱՐՄԵԱՆՑԻ

92

36-11

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

8856

(ՀԱՄԱԲՈՑ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ)

2860

Կ Ա Զ Մ Ե Ց Ե լ ա.

1 պատկերն փ.

Հայաստանի Հանրապետություն
Կենտրանալ գոր. Եալ 1902 թ.
Հայաստանի Հանրապետություն
Հայաստանի Հանրապետություն

Լենին

9533

Ս.-ՊԵՏԵՌԱՅՈՒԹ
ՊԻՆԴԱԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱԿԱԳՐԻ ՏՊԱՐԱՆ

1902

1 - 301

25 JUL 2013

9102


Дозволено цензурою. С.-Петербургъ, 14 Февраля 1902 года.



41
41 +



„Пушкинская Скоропечатня“, Лешуковъ 4.



ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ.

«Վահկանացու ծնեալ՝ անմահ զիւրն
իշտառակ եթող...»
Մովս. Խորենացի:

8856

Ա.

Սահակ Պարթև Մեծն Ներսիսի որդին էր:
Նա ծնուեց 354 թ. և իր մատոր ու կրօնական
կրթութիւնն ստացաւ նախ Կեսարիայում և ապա
Բիւղանդիոնում:

Դեռ մատաղ հասակից հօր ազգեցութեան
շնորհիւ նրա ջինջ հոգու մէջ արմատ են զցում
լաւն ու գեղեցիկը, կրօնական ջերմեանդութիւնն
ու աստուածակացութիւնը: Քանի մեծանում էր
նա, նրա մէջ աճում էին և կրօնական ձգտում
ները: Եւ ուրիշ կերպ չէր ել կարող լինել,
որովհետեւ այդ ժամանակ կրօնական ողին թագա-
սորում էր ոչ միայն Սահակի ընտանեկան շրջա-
նում, այլև ամեն տեղ՝ թէ բուն ժողովրդի մէջ
և թէ արքունիքում, թէ հայաստանում և թէ
ամբողջ քրիստոնեայ աշխարհում:

Իր ուսումնառութեան ընթացքում նա շատ
բան սովորեց, շատ մեծամեծ մարդկանց հետ ծա-
նօթութիւն հաստատեց: Եւ այդ ամենը բարերար
ազգեցութիւն ունեցաւ նրա վրայ: Նա շատերի

սիրելին դարձաւ, շատ պատիւների արժանացաւ,
նյու իսկ օաւարութեան մէջ՝ թիւզանդիոնում:

Նա հետեւ իւր հօր՝ Մէծն Ներսիսի օրի-
նակին և ամուսնական կեանք ընտրեց, որպէսզի
Ս. Լուսաւորչի ցեղը անժառանդ չժողնի: Սա-
կայն նրա սպասելիքը չիրականացաւ. նա արու-
ղաւակ չունեցաւ:

Ամուսնական կեանքը տուեց նրան մի գուստը
միայն՝ Սահականոյշ անունով: Սահակ Պարթեր
իրան յատուկ հոգացողութեամբ կրթեց ու դաս-
տիարակեց նրան և վերջը կնութեան տուեց Հա-
մազասպ Մամիկոնեանին: Ահա այդ ամուսնութիւ-
նից էր, որ ծնան հայերիս համար այնքան սիրելի,
այնքան պանծալի երեք նահատակներ՝ Քաջ
Վարդան, Հմայակ և Համազասպ եան...

Ահա դրանց մէջ էր, որ վերջին անգամ առ-
կայծեց Սահակ Պարթերի հայրենասիրական ձրդ-
տումը և վեհ սիրաբ...

Բ.

Մեռաւ Սահակ Պարթերի կինը և նա կուսա-
կրօն դարձաւ: Հոգեւորական այդ կոչումը մի ան-
գամից առաջ քաշեց նրա ամբողջ ջերմեռան-
դութիւնը: Նա ճգնաւորական կեանք էր վարում:
Շուտով նրա շուրջը հաւաքուեցին աշակերտ-
ներ, որոնց թիւը հասաւ 60-ի: Դրանք բոլորն էլ
ծոմ ու աղօթքով էին անցկացնում իրանց օրերը:
Մազեղէն քուրծ էր նրանց հագուստը, եր-

կաթէ շղթան էր նրանց գօտին. և սաղմոսերգու-
թիւնն էր նրանց ամենաքաղցր զբաղմունքը:

Այդպիսի ջերմեռանդութիւնն ու անձնազո-
հութիւնը աւելի ևս ուժեղացնում էր ժողովրդի
սկրը գէպի Սահակ Պարթերը, աւելի ևս մեծա-
ցնում էր նրա հոչակը բոլոր շրջաններում:

Ահա հէնց այդ պատճառով Ասպուրակէս կա-
թողիկոսի մահից յետոյ, ամբողջ ժողովուրցն ու
Խոսրով Գ թագաւորը նրան ընտրեցին հայրապե-
տական աթոռի գահակալ (389 թ.):

Բայց անմիտաբանութիւնը միշտ քանդել է
հայի տունը: Այս անգամ էլ նա խաղաց իր աւե-
րիչ գերը:

Նախարարներից շատերը գեռ չէին մոռացել
իրանց թշնամութիւնը Խոսրով թագաւորի գէմ:
Նրանք ուզեցին օգտուել յարմար առիթից և ամ-
բաստանել նրան պարսիկների առաջ: Այդ նպա-
տակով նրանք յայտնեցին պարսից Շապուհ թա-
գաւորին, թէ անկեղծ չէ Խոսրովի հաւատարմու-
թիւնը գէպի պարսիկները, թէ նա միշտ յարաբե-
րութեան մէջ է յոյների հետ, իսկ իբրև ապա-
ցոյց առաջ էին բերում այն հանգամանքը, որ
նա կաթողիկոս է հաստատել Յունաստանում կըր-
թուած Սահակ Պարթերին, այն ևս առանց պար-
սից արքունիքի համաձայնութիւնն ստանալու:

Զայրացաւ Շապուհ: Նա իսկոյն սպառնական
մեղագրանք ուղարկեց հայոց թագաւորին՝ Խոս-
րովին: Սակայն սպառնալիքը չունեցաւ ոչ մի աղ-
գեցութիւն: Խոսրովը աներկիւղ գոռողութեամբ

պատասխանեց Շապուհի սպառնալիքին և անարդանքով ճանապարհ գրեց նրա պատգամաւորներին: Նա որոշեց նոր գաշնչք կապել յօների հետ և նրանց հովանաւորութեան տակ դնել ամբողջ հայաստանը, եթէ կայսրը յանձն առներ օգնել:

Բայց քնած չէր և Շապուհը: Նա ուղեց արժանի պատիժ տալ ըմբոստ Խոսրովին, ուստի և ահազին զօրքով հայաստան ուղարկեց իր որդուն՝ Արտաշրին:

Անօդնական էր հայոց թագաւորը: Նա չկարողացաւ դիմաղրել Արտաշրին և փախչել նրանից: Նա զըկուեց իր թագից ու թագաւորական գահից և շղթայակապ գնաց ծիզըն: Նրան բանտարկեցին Անյուշ բերգում: Սակայն այս զեռ բոլորը չէր: Սահակ Պարթևն էլ զըկուեց կաթողիկոսական գահից: Դառն էր հայ ժողովրդի ու իշխանների վիճակը: Նրանք խընդեցին Արտաշրից գոնէ մի նոր թագաւոր նշանակել հայերի վերայ: Արտաշերը գահը յանձնեց Խոսրովի եղբօրը՝ Վրամշապուհին, նրան մշտական հպատակութեան մէջ պահելու համար պարսկական մի մեծ զունդ թողեց և ապա շտապեց դէպի Պարսկաստան, որպէսզի կարողանայ իր ծերունի հօր մահից յետոյ գահը ժառանգել: Վրամշապուհի օրով Սահակ Պարթևը նորից կաթողիկոսական գահը բարձրացաւ և իրան յատուկ տոկունութեամբ շրջունակեց հոգալ ժողովրդի հոգեորդէաբերը:

Գ.

Միայն հոգեոր գործունէութիւնը չէր զբաղեցնում Ա. Սահակին: Նա միջամտում էր և քաղաքական գործերին: Այս ասպարէզում էլ նա պակաս հետեւանքի չէր համնում:

Սահակ սպարապետի մահից յետոյ Ա. Սահակի խնդրումէ Խոսրով թագաւորից, որ իր փեսային՝ համազասպ Մամիկոնեանին յանձնէ այդ պաշտօնը, բայց Խոսրովը գտուարանում էր այդ կատարել: Խոսրովի գահազուրկ լինելուց յետոյ Սահակ Պարթևը նոյն խնդրով դիմեց նորահաստատ Վրամշապուհ թագաւորին: Վերջինս քաղաքագէտ մարդ էր, ուստի և չուզեց առանց պարսից թագաւորի համաձայնութեան այդ քայլն անել: Նա յանձնարարական նամակներ տուեց Սահակին և ուղարկեց Արտաշրի մօտ: Գրիգոր Լուսաւորչից սկսած սա առաջին անգամն էր, որ հայոց կաթողիկոսը գնումէր պարսից դուռը: Մի կողմից այդ հանգամանքը, իսկ միւս կողմից Սահակ Պարթևի Ճարտար լեզուն ու քաղաքագէտ խելքը կարողացան ընդհանուր յարգանք և համակրանք զարթեցնել պարսիկների մէջ:

Արտաշերը մեծ պատուով ընդունեց հայոց հայրապետին և կատարեց նրա բոլոր խնդիրները, այդ մասին մի առանձին հրովարտակ զրելով Վրամշապուհի անունով: Այդ հրովարտակում ի միջի այլոց ասուած է:

— «Ստացայ քո զբաները Սահակ եպիսկոպոսի մասին և յիշեցի նրա նոխնիքների երախ-

տիքը, այն նախնիքների, որոնք Սուրէնեան Պահ-
լաւի նահապեսներն էին և իրանց կամքով յանձն
առան իմ նախորդ և անուանակից Արտաշրի իշ-
խանութիւնը: Նրանք Արտաշրին սիրեցին աւելի,
քանթէ իրանց ազգականներին... Այդ պատճառով
Սահակի օրդեղրած համազապին մեր հրամանով
ձեր զօրքերի վրայ սպարապետ կկարգես և դրա
ազգին կտաս ձեր նախարարների կարգում հինգե-
րորդ գահը, և դրան կտաս այն դիւղերն ու կալ-
ուածները, որ քո նախնիքները տուել են դրա
հայրերին»:

Բացի դրանից նա Սահակի միջնորդութեան
համաձյն ներեց իր առաջ մեղանչած կամսարա-
կան և Ամատունի տոհմերին և վերադարձրեց
նրանց կալուածները:

Ահա այդպիսի աջողութիւն ունեցաւ Ս. Սա-
հակի միջնորդութիւնը, այդպիսի հետեանք ունե-
ցաւ նրա պատգամաւորութիւնը:

Դրանից յետոյ Ս. Սահակ վերադարձաւ հայա-
տան և եռանգուն կերպով շարունակեց իր գոր-
ծունեութիւնը:

Դ.

Քսան և մէկ երկար ու ձիգ տարիներ թագա-
ւորեց Վռամշապուհ և իր քաղաքագետ ու զգու-
շաւոր կառավարութեամբ մեծ բարիքների հաս-
ցրեց հայ ժողովրդին: Նա շատ լաւ հասկանում
էր իր փափուկ դրութիւնը հարեան երկու հզօր
պետութիւնների մջ և մի այնպիսի դիրք էր

բոնել որ չժշնամանցնէ ոչ մէկին և ոչ էլ միւ-
սին: Բայց միենոյն ժամանակ նա հայրական խնամ-
քով հոգում էր իր ժողովրդի կարիքները:

Այդպիսի կառավարութեամբ նա կարողա-
ցաւ հայերի հին վերքերը բուժել և արքունի գա-
հը ամրացնել...

Պարզ է ուրեմն, որ մի այդպիսի թագաւորի
մահը մեծ վիշտ պիտի պատճառէր հայ ժողովր-
դին: Կորուսոր զգալի էր մանաւանդ այն պատ-
ճառով, որ չկար արժանաւոր գահաժառանդ, որը
կարողանար Վռամշապուհին փոխարինել: Նրա որ-
դին՝ Արտաշերը տասնամեայ գեռահաս մանուկ էր:
Մնումէր մի ուրիշ ելք դանել մի ուրիշ գահա-
ժառանդ ընտրել:

Եյստեղ էլ օգնութեան հասաւ Սահակ Պար-
թել: Նա նախարարների խնդրով գնաց Պարսից
Յաղկերտ Ս. թագաւորի մօտ, որպէսզի զահազուրկ
Խոսրովին Սնյուշ բերդից ազատէ և նորից հայոց
թագաւոր դարձնէ: Զափազնց ծանր էր այդ
բանն իրագործելը, որովհետեւ Սնյուշ բերդում մէ-
կին փակել—կնշանակէր մահուան զիրկը նետել...
Սակայն Սահակ Պարթել հասաւ իր նպատակին:
Սլեզարդ Խոսրովը հայաստան եկաւ և հայոց թա-
գաւոր դարձաւ, բայց երկար չտեսեց այդ թագա-
ւորութիւնը: Մի քանի ամսից յետոյ նա ևս վախ-
անուեց:

Դրանից յետոյ Յաղկերար իր որդի Շապու-
հին հայոց թագաւոր անուանեց և հայաստան ու-
ղարկեց: Հայերը հարողացան դիմադրութիւն ցոյց

տալ, որովհետեւ չկար մէկը, որ նրանց առաջնորդ դառնար, որ նրանց քաջալերէր ու ղեկավարէր: Մեռած էր համազասպ սպարապետը. սդի մէջ էր Սահակ Պարթեր:

Նապուն անարգել մտաւ Հայաստան: Նա ամեն կերպ աշխատումէր ուժեղացնել պարսկական աղղեցութիւնը Հայաստանում: Այդ նպատակով խնջյքներ էր սարքում, հայերին և պարսիկներին խնամիացնել էր աշխատում և այն: Բայց այդպիսի վարժունքը ատելութիւն զարթեցրեց թէ նախարարների և թէ ամբողջ ժողովրդի մէջ: Բարեբաղդաբար Նապուն Երկար չմնաց Հայաստանում: Չորս տարի թագաւորելուց յետոյ, նա զնաց Պարսկաստան՝ իր հօր գահը ժառանդելու համար, իսկ իր տեղը թողեց մի պարսիկ կառավարիչ: Հայերը օգտուեցին բարեյաջող հանգամներից և դուրս քշեցին պարսիկներին: Սակայն անիշխանական զրութիւնը դրանով չփոխուեց: Նապունը Պարսկաստանում սպանուեց, նրա տեղ գահ բարձրացաւ Վաճամը, որը և մի ահազին բանակ ուղարկեց Հայաստան, որպէսզի հայերից վրէժ լուծէ:

Այդ ժամանակ Սահակ Պարթե վերցրեց իր թոռներին և անցաւ յունաց բաժնի Հայաստանը: Այսաեղ էլ նա միայն ժողովրդի համար էր աշխատում: Նա տեսնումէր հայերի մտաւոր աղքատութիւնը և ամեն կերպ ձգտումէր զրա առաջն առնել: Նրա յորդորանքով Մեսրոպ Մաշտոց և ուրիշ արքանաւոր քարոզիչներ շրջում էին ամեն կողմ և քարոզում աւետարանական սէր և եղ-

բայրութիւն, Ճշմարիտ զթասրտութիւն ու հայրենասիրութիւն: Նրանք հիմնում էին դպրոյներ, հաւաքում էին ընդունակ երեխաներ և նրանց զրագիտութիւն սովորեցնում նորաննար տառերով: Բայց այստեղ էլ յոյն գործակալներն էին արգելք լինում հայ քարոզիչներին: Ահա այդ պատճառով Սահակ Պարթե յանձնարարական նամակներ է տալիս յունաց թագէոս կայսեր, Ատափիոս Եպիսկոպոսի և Սնատողիոս զօրավարի անունով և Մեսրոպ Մաշտոցին ու Վարդան Մամիկոնեանին ուղարկում կ. Պօլիս, որպէսզի այնտեղից իրաւոնք բերեն Հայաստանում դպրոցներ բանալու և հայերէն լեզուն սովորեցնելու համար: Այդ մասին նա հետեւեալն է գրում թէողոս կայսրին.— «Խաղաղասէր կայսրին, իր տէր օգոստոս թէողոսին, հայոց Սահակ Եպիսկոպոսը ողջունումէ Տէրով:

Գիտեմ, որ մեր նեղութեան համբաւը հասած է ինքնակալ կայսերդ ներող ականջին: Այդ պատճառով յոյս զնելով քո բարեսրատութեան ու զթութեան վրայ, ես զիմեցի ձեր հովանու տակ ապաստան գտնելու: Տեղական կառավարիչների հրամանով ես ընդունելութիւն չգտայ իմ վիճակում: Նրանք այնչափ վերաւորեցին մեղ, որ մինչեւ անդամ չընդունեցին այն նշանագրերը, որ բերեց այս մարզը (Մեսրոպ Մաշտոց), որին և բարեբարիդ մօտ եմ ուղարկում: Դա Երկար ժամանակ մեծ զժուարութիւններ է քաշել Ասորիների աշխարհում: Արդ թող բարեհածէ քո տէրութիւնը չզրկել մեղ իշ-

խանութիւնից յունոց վեճակում և հրամայէ, որ
ընդունեն մեզ և մեր ուսումը: Ողջ եղի՛ք»:

Պատգամաւորութիւնը փառք ու պատուով
ընդունելութիւն է գտնում և կատարեալ յաջողու-
թեամբ վերաբառում: Կայսրը իր թղթով
յայտնումէ, թէ իրաւունք է տալիս, որ հայերը
ինչպէս կուսաւորչի ժառանգներին Ս. Սահակին էլ
իրանց հովիւ ձանաչեն, իր գործակալներին հրա-
մայումէ, որ նպաստեն դպրոցներ բաց անելու
գործին և շնորհում է Ս. Մեսրոպին՝ առաջն վար-
դապետ (ակուսիտ), իսկ Վարդանին՝ արքադատելու
տիտղոսը:

Առաջիկոս եպիսկոպոսն էլ նոյնպիսի նպաս-
տաւոր գրութիւն է ուղարկում Սահակ Պարթեկի
անունով:

Դրանից յետոյ Մեսրոպ Մաշտոց և նրա ա-
շակերտները աւելի մեծ եռանդով շարունակում
են իրանց ուսուցչական գործունէութիւնը: Իսկ
Սահակ Պարթեկ, նախարարների խնդիրը յարգելով,
նորից անցնումէ պարսից բաժնի հայաստանը,
որպէսզի այնտեղ էլ իր աղքեցութեամբ թեթե-
ւացնէ ժողովրդի ծանր վեճակը և վերականգնե-
ցնէ խաղաղութիւնը:

Նախարարների հետ խորհրդակցելուց յետոյ,
նա Սմբատ ասպետին և իր թոռ՝ Վարդան Մա-
սիկոնեանին ուղարկում է Պարսից թագաւորի
մօտ, որպէսզի նրա հետ հաշտութիւն կայացնեն:

Թագաւորը զիտէր, որ առանց նախարարների
կամքին անկարող է տիրել հայաստանին, ուստի և

կատարում է նրանց խնդիրը՝ սյսմնքն թագաւոր է
հաստատում վրամշապուհի որդի Արտաշէսին, նրան
պարսկական Արտաշեր անունը տալով:

Ե.

Երիտասարդ էր Արտաշէսը և փչացած բնաւո-
րութեան տէր: Նա իր զեղս վարք ու բարքով
ամենքի զայրոյթը շարժեց: Սահակ Պարթեկը մի
քանի անգամ խրատեց նրան, որ հրաժարուի իր
անարժան գործերից: Նախարարներին էլ յորդորեց
ներողամիտ և համբերող լինել: Բայց այդ բոլորը
ապարդիւն անցան: Արտաշէսը շարունակում էր
վատ կենցաղավարութիւնը: Կցուեց նախարարների
համբերութեան բաժակը: Նրանք խորհուրդ արեցին
և վճռեցին խնդրել Պարսից թագաւորից՝ որ Արտաշէ-
սին զրիէ գանից և մի պարսիկ մարզպան ուղարկէ
հայաստան: Նրանք եկան իրանց ալեզարդ կաթողի-
կոսի մօտ և յայտնեցին այդ որոշումը:

«Այլեւ անկարող ենք թագաւորի այսպիսի
անօրէն ու պիղծ գործերը տանել ասումէին նրանք...
Դու պէտք է այսպիսի անհնար ցաւերի հնարը գտնես
և մէջ տեղից վերցնես անբարիշտ թագաւորին, որ
անհաւատի նման այդքան յայտնի արհամարանքով
ոտքի տակ է տալիս սրբութիւնը և աներկիւղ կամքով
գործումէ կեղաստ անառակութիւններ...»

Վշտացաւ հայրենասէր կաթողիկոսը: Նա աշ-
խատումէր համոզել նախարարներին, որ յետ կան-
գնեն իրանց անխորհուրդ գիտաւորութիւնից, հոս-
կացնելով, թէ ո՞րքան վատ հետեանքներ կու-

նենայ հայոց թագաւորութեան կործանումը և ազգը պարսից անմիջական իշխանաւորութեան ենթարկելը:

«Ես ձեր խօսքերը սուտ չեմ համարում, ասում էր նա, ես ինքս լսել եմ նրա ամօթալի դործերի մասին, և շատ անգամ յանդիմանել: Բայց այժմ պէտք է մի փոքր տանենք այդ մարդու թերութիւնները, մինչև որ գործի ելքը դժնել կարողանանք...»

Սատուած չանէ, որ ես մեր ճշմարիտ հաւատի մասնիչը լինիմ և իմ հօտի մոլորուած ոչխարին անարդանքի մասնեմ:

Ի՞նչպէս կարելի է, որ ես իմ հիւանդացած ոչխարին փոխեմ առողջ գաղանի հետ, որի առողջութիւնը պատուհաս է մեզ համար....»

Սյսպիսի շատ խրատներ խօսեց հեռատես Սահակը, շատ աղանդ ու արտասուեց, բայց իղուր: Նախարարները մնացին անդրդուելի: Նրանք կասկածանքով վերաբերուեցին դէպի Սահակ Պարթևի խօսքերը, որովհետեւ կարծումէին, թէ նա ուզում է գործը ձգձգել որպէսզի իրանց խորհուրդը թագաւորին յայտնէ: «Էնց այդ պատճառով նրանք վճռեցին Սահակին էլ պաշտօնից հրաժարեցնել տալ, ուստի հետները վերցրին Արծկէ զիւղացի Սուրմակ անունով մի երէց, գնացին պարսից արքունիքը և յայտնեցին, որ իբր թէ Սրտաշէսը միացել է յօյների հետ և ուզում է ապստամբել պարսիկների դէմ: իսկ Սահակ Պարթևն էլ նրան գործակից է:»

Զայրացաւ Վռամը: Նա իսկոյն իր մօտ կանչեց հայոց թագաւորին ու կաթողիկոսին: Սկսեց հարց ու փորձ: Սահակը միանգամայն հակառակուեց նախարարների կարծիքին: Նա բացարձակ կերպով յայտնեց, որ զրպարտութիւն է նախարարների ասածը, որովհետեւ Սրտաշէսի մտքովն էլ չէ անցել պարսիկների դէմ ապստամբել: Դարնից յետոյ Վռամը հրամայեց Սուրբն Պահլաւին, որ նա, որպէս ազգական բարեկամական խրատով համոզէ Սահակին:

«Որովհետեւ զու իմ արիւնակիցն ու հարազատն ես, ասում էր Սուրբնը Սահակ Պարթևին, ուստի խորհուրդ եմ տալիս, որ քո բարին մտածես: Եթէ զոնէ այժմ միաբանես նախարարների հետ, շատ յարդուած կլինիս պարսից թագաւորից և քո թոռը՝ Վարդան Մամիկոնեան հայաստանի իշխան կդառնայ ամեն կերպ թագաւորին հաւասար ու համապատիւ... իսկ եթէ յամառելով ուրիշ կերպ մտածես, քո կաթողիկոսական գահը կկորցնես և ունեցած իշխանութիւնից կզբկուես...»

Բայց միթէ այզպիսի սպանալիքը կարող էր Սահակի նման մի անձնաւորութեան վրայ աղդեցութիւն ունենալ: Նա հայ ժողովրդի հայրն էր բառիս բուն նշանակութեամբ, ուստի և չէր կարող իր անձնական փառքը ընդհանուրի շահից զերագասել: Նա հաւատացած էր, որ Սրչակունեաց թագաւորութեան անկումը մեծ թշուառութիւն պիտի առաջ բերէր հայերի համար, ուստի և անկարող էր նպաստել այդ բանին:

«Ի՞նչպէս կարող եմ սնափառութեան ու
ինքնասիրութեան համար չարախօսել ընկերիս մա-
սին, ասաց նա Սուրբն Պալհաւեին: Ես Արտաշէսի
մասին մի այնպիսի վատութիւն չգիտեմ, որով
արժանի լինի ձեզանից դատուելու ու անարդուե-
լու: Նա թէև մեր՝ սրբութիւն սիրող օրէնքների
համաձայն արժանի է նախատինքի, բայց ձեր
պիղծ օրէնքների համաձայն՝ դովութեան ու պատ-
ուի է արժանի»:

Այդպիսի պատասխանը աւելի ևս կատաղե-
ցրեց Վուամին: Նա այլևս առանց տատանուելու
զրկեց (428 թ.) Արտաշէսին՝ թագաւորութիւնից,
իսկ Սահակ Պարթևին՝ հայրապետութիւնից: Եւ
երկուսին էլ Պարսկաստանում պահեց: Հայս-
տանը կառավարելու համար նշանակեց մի պար-
սիկ մարզպան, կաթողիկոսութիւնն էլ յանձնեց
Սուրբն երէցին:

Զ.

Այդպիսով պարսից կառավարութիւնը բրո-
նութեան առաջին քայլն արեց: Նա զարկոր
ստրկութեան շղթայի առաջին օղակն անցուց այ-
րիացած Հայաստանի փափուկ պարանոյը: Պար-
սից նենդաւոր քաղաքականութիւնը հասաւ իր
նպատակին: Հայ աղքը զրկուեց քաղաքական ին-
քընությն կեանքից և ընկաւ օտար լծի տակ: Այդ
բանին մեծ չափով նպաստեցին մի կողմից հէնց
իրանք Արշակունեաց տոհմի անարժան թագա-
ւորները, իսկ միւս կողմից՝ փառասէր նախարար-

ների անմիաբանութիւնը: Հայրենասէր Սահակ Պար-
թևի ջանքերն էլ չկարողացան այդ չարեքի առաջն
առնել...

Դառն էր հայ ժողովրդի վիճակը մանաւանդ
այն ժամանակ, երբ նա զրկուեց իր անձնուէր
հովուկց, երբ կաթողիկոսական զահը բարձրացաւ
անարժան Սուրբն երէցը: Բայց մի տարուց աւել
չուելց Սուրբն հայրապետութիւնը: Հէնց այն
նախարարները, որոնք նպաստել էին նրա կաթողի-
կոսանալուն, հալածեցին նրան և վերջը գահրկեց
արին: Դրանից յետոյ Վուամը կաթողիկոս նշանակեց
Բրքիշյ անունը մի ասորու:

Բրքիշյն եկաւ հայաստան փչացած ընկերներով
ու տանատիկին կանանցով շրջապատուած: Նա իր
շահասիրութեամբ ու վատ կենցաղավարութեամբ
աւելի մեծ զժոհութիւն առաջացրեց: Նախարար-
ները բաժանուեցին երկու կուսակցութեան: Մի
մասը խնդրում էր որ Վուամը նոր կաթողիկոս
նշանակէ, ում որ կամենայ, իսկ միւս մասը ուղում
էր Սահակ Պարթևին տեսնել կաթողիկոսական
զահի վրայ:

Հեռատես Վուամը ուղեց երկու կուսակցու-
թեան ցանկութիւնն էլ կատարել: Այդ նպատակով
նա Շմուէլ անունով մի տարու կաթողիկոս նշանա-
կեց, որպէսզի նա մարզպանի հետ միասին հարկերի
ու դատաստանական գործերի վրայ հսկէ, իսկ Սահակ
Պարթևին արձակեց Պարսկաստանից, վերադարձեց
մի քանի կալուածների լրացունք տուեց քարոզելու



և Շմուելի համաձայնութեամբ ձեռնադրութիւններ անելու:

Բայց Պարսկաստանից արձակելուց առաջ Վռամը իր մօտ կանչեց ալեղարդ Սահմակին և բազմամարդ ժողովում դիմեց նրան հաւաեւալ խօսքերով.

«Երգուեցնում եմ քեզ քո հաւատով, որ մեզ հաւատարիմ մնաս, յցների սուտ հաւատակցութեամբ խարուելով ապստամբութեան մասին չխորհես, չայսատան աշխարհի մեր ձեռքով կորչելուն պատճառ չդառնաս և մեր բարերար անունը՝ չարագործի անուան չփոխես...»:

Մանր տպաւորութիւն թողեց այդ խօսքերը Սահմակի վրայ: Առանց այն էլ դառնացած էր նրա սիրաը, առանց այն էլ լցուած էր նրա համբերութեան բաժակը: Այդ խօսքերից յետոյ նա պարկեշտ կերպով վերկացաւ տեղից, բացեց իր ձարտար լեզուն և սկսեց մի ազգեցիկ ձառ: Նա յիշեց իր բազմաթիւ երախտիքները և պարսիկների ազերախտութիւնը: Նա յանդիմանեց նրանց կեղծաւոր քաղցրախօսութիւնը, գառն խորհուրդները, գործերն ու պաշտամունքը:

Լուռ ու մունջ նատած էին Վռամն ու նրա խորհրդականները և լսում էին ալեղարդ հայրապետի անվախ խօսքերը: Հիացած թաղաւորը հրամայեց շատ արձաթ տալ Սահմակին իբրև վարձատրութիւն նրա պերճախօսութեան ու անվախութեան: Բայց անշահասէր Սահմակի Պարթել մերժեց այդպիսի վարձատրութիւն և դրա փոխարէնը խնդրեց, որ հայ նախարարների արտօնութիւնները վերա-

կանդնէ և Արշակունեաց հետ խնամի իշխանների կալուածները վերապարձնէ: Վռամը կատարեց այդ խնդիրը և Սահմակ Պարթե փառքով ու յաջողութեամբ հայաստան եկաւ: Սակայն նա թողեց Վաղարշապատը՝ իր հին փառաւոր աթոռը, և առանձնացաւ Բագրեանդ գաւառի Ս. Յովհաննու վանքում: Մի նոր ուխտատեղի գարձաւ այդ վանքը: Գալիս էին Սահմակ Պարթեի աշակերտները՝ իրանց անզուգական ուսուցչի խրատներն ու պատուէրները ստանալու, գալիս էր հայ ժողովուրդը՝ իր պաշտելի հովուի ազգու քարոզները լսելու...

Ը.

Շմուելը իր նախորդներից լաւ չէր՝ աղահութեան ու առհասարակ վարքի կողմից: Նա Սահմակ Պարթեին թոյլ չէր տալիս վախճանուած եպիսկոպոսների փոխարէն նորերը ձեռնադրելու, որովհետեւ յափշտակում էր նրանց վիճակները: Բացի զրանից նա արքունական հարկերն ուշացնելու չնչին պատճառով հալածում էր կենդանի եպիսկոպոսներին ու սեփականացնում էր նրանց գոյքը: Պարզ է, որ մի այսպիսի կաթողիկոս անկարող էր սէր ու համակրանք վայելել: Նրան ատում էին թէ հոգեորականները և թէ ժողովուրդը: Միակ միախարութիւնն երանելի Սահմակի խրատներն ու քարոզներն էին, որ այնքան ազգու էին հնչում ներքին ու արտաքին երկպառակութեան զրկում տատանող հայերի ականջն:

Յաւում էր Սահակ Պարթեւ Հայաստանի դառը վիճակը տեսնելով, բայց երբէք չէր յուսահաւում: Նա անդադրում շարունակում էր իր եռանդուն գործունէութիւնը Ա. Մեսրոպի հետ միասին, աւելացնելով դպրոցների թիւը, բարեկարգելով նրանց վիճակը և առհասարակ զարկ տալով հայկական նորածիւ գրականութեան զարգացմանը:

Անցան հինգ երկար տարիներ. մեռաւ Շմուելը: Հայ մեծամեծները այդ գէպքը յարմար առիթ համարեցին իրանց մեղքը քաւելու և Սահակ Պարթեւից ներումն խնդրելու համար: Նրանք ներկայացան ալեզարդ ծերունուն և ազաջում էին, որ նա նորից նստի կաթողիկոսական զահը:

«Մեղանչեցինք քո առաջ, ասում էի նրանք, ներիր մեր մեղքերը և նորից ընդունիր կաթողիկոսական զահը:»

Մենք կաշխատենք ու կինդրենք, որ թագաւորն էլ յօժարի այդ բանին»:

Սակայն անդրդուելի մնաց Ա. Սահակը.

«Ես իբրև Քրիստոսի աշակերտ, սովոր չեմ մէկի վրայ բարկանալ... բայց դուք ինքներդ մտածեցէք:»

Դուք ձեր հարազատթագաւորի գործերին վրէժինդիր եղաք և նրա վրայ զայրանալով, մեր սուրբ հաւատը մատնեցիք ու օտարների ծաղքի առարկայ դարձրիք: Այժմ ինչով էք աշխատում ինձ միթմարել, կամ ինչով էք համոզում ինձ, որ քահանայապետ գառնամ...: Հեռացեք ինձնից և թոյլ տուեք, որ ես ողբամ հայոց աշխարհի կորուստը...»:

Սյդ խօսքերից յետի էլ հայ ժողովուրդն ու մեծամեծները լաց ու աղաւանքով շարունակեցին իրանց խնդիրը: Խնդրողների վրայ ազդելու համար հարկաւոր էր մի զօրեղ միջոց, ուստի և Ա. Սահակը պատմեց այն տեսիլը, որ շատ տարիներ առաջ երեացել էր նրան՝ Վաղարշապատի եկեղեցում: Յաւալի էր այդ տեսլի բովանդակութիւնը: Նա գուշակում էր, թէ պիտի վերանայ թագաւորութիւնը Արշակունեաց անից և կաթողիկոսութիւնը՝ Ա. Գրիգորի յեղեց: Նա պատմում էր այն հալածանքները, որ պիտի կրէ հայոց աշխարհը, այն վշտերը, որ պիտի տանջեն հայ ժողովը ին:

Բաղմութիւնը լսեց այդ ամենը. լսեց և դառնագին արտասուեց: Սահակ Պարթեւը կրկնեց աւետարանի խօսքերը, թէ, «պէտք է գայ գայթակղութիւնը, բայց վայ նրանց, որոնց ձեռքով գայթակղութութիւնը պիտի գայ» և արտասուքն աչքերին հեռացաւ բազմութիւնից...»

Սյդ գէպքից յետոյ երկար չապրեց Սահակ Պարթեւ... Նա վախճանուեց (440 թ.) Բագրեւանդի Բլուր գիւղում: Երբ նրա մահուան բօթը չնեց, ամեն կողմ տիրեց սուդ ու վիշտ, ամեն կողմից լսուեցին ցաւակցական հառաւանքներ. շուտով ժողովը ու իշխանների խուռն բազմութիւնը շըջապատեց երանելի ննջեցեալի օթեւանը: Թանկարին դիակը մեծ հանդիսով փոխադրեցին Մամիկոնեանների Սշտիշատ գիւղը (Տարօնում) և այնտեղ էլ թաղեցին: Կարծ միջոցից յետոյ Մամիկոնեանները մի հոյակապ եկեղեցի շնեցին

գերեզմանի վրայ, այն գերեզմանի, որն իր ծոցում
ամփոփում էր արժանաւոր հովուի, գաղափարական
զինորի նշխարները, որը մինչև օրս էլ այնքան թանգ,
այնքան նուիրական է ամբողջ հայ ժողուրդի համար:

Ե.

Միայն քարոզական և քաղաքական գործու-
նեութիւնը չէր, որ անմահացրեց Սահակ Պարթևի
յիշատակը: Նա մեծ ծառայութիւն է արել հայ
ժողովրդին նաև իբրև գրական գործից իբրև հայկա-
կան գպրութեան հիմնալիր և տառեր հնարող
Մեսրոպ Մաշտոցի գործակից: *) Նրայորդորանքով
էր, որ Վասամշապուհ թագաւորը բերել տուեց
«Դանիէլիան» տառերը, նրա չնորհիւն էր, որ Վա-
զարշապատի ժողովը քննեց հայկական տառեր հնա-
րելու հարցը, վերջապէս նրա հայրական հոգատա-
րութիւնն էր, որ այնպիսի ծաղկած դրութեան
հասցրեց նորահաստատ գոլրոցները:

Նա երանելի Մեսրոպ Մաշտոցի անբաժան
խորհակիցն ու գործակիցն էր: Դրանք էին, որ
կարգաւորեցին հայկական այբուբէնը, հիմնեցին բաղ-
մաթիւ գոլրոցներ հայստանի զանազան զաւառ-
ներում, արժանաւոր աշակերտներ ուղարկեցին Ասո-
րեստան և Յունաստան՝ հիմնաւոր զիտութիւն ձեռք
բերելու և տապա հայ ժողովրդի մտաւոր անդաս-
տանը մշակելու:

Սակայն առաւել նշանաւորը գրանց գրականա-
կան գործունէութիւնն էր, որի չնորհիւն նրանք

ամենայն իրաւամբ կարողեն հայկական մատենագրու-
թեան «Հայութեր» համարուիլ:

Սահակ Պարթևի երկասիրութիւնների մէջ
ամենագլխաւորն է Ա. Ա. Պատահանունի թարգմանութիւնը,
որ կատարեց ժողովրդի ու թագաւորի խնդրով և
որը բոլոր թարգմանութիւնների «Վագոն-հնու» է
անուանուում: Բացի գրանից նրա գրչին են պատկա-
նում Ա. Ա. Պատահանունի քաղցրահիւս շարականների
ամենամեծ մասը, «Պատահագանագորյոց», Ժանագրի»
և «Մաշտոցի» աղօթքներից շատերը և «Ա. Զ. Պա-
հանունի» կարգը: «Քահանանայանանուն» ու «Հագեհան-
գիստն» էլ նա է թարգմանել ասորերէնից—Ս. Եփ-
րեմի աղօթքներից:

Բացի այդ բոլորից նա ունի բազմաթիւ իրաւա-
ներ ու յորդորական նամակներ: Դրանցից ամենա-
նշանաւորն է «Կանոն» կոչուած զրուածքը, որ
Վազարշապատի ժողովից յետոյ Ս. Սահակ ուղարկեց
հայստանի զանազան գաւառները. զրանք բաժան-
ուած են վեց վլուխների և ամենալուսաւոր կերպով
բացարում են եպիսկոպոսների, քորեպիսկոպոսների
(բարեկարգիչ տեսուչ), քահանաների ու վանական-
ների պարտականութիւնը գէպի ժողովուրդը և
ժողովրդի պարտականութիւնը գէպի եկեղեցին ու
Սասուած: Դրանց մէջ սաստիկ յանդիմանուած է
ուսումնատեցութիւնը, կաշառակերութիւնն ու
անզմութիւնը:

Առհասարակ Ս. Սահակի բոլոր զրուածքներն
աչքի են ընկնում իրանց պարզ ու մաքուր լե-

*) Տես Մեսրոպ Մաշտոց

զուովը, բանաստեղծական հանձարով և գեղեցիկ իմաստով:


Պաշտելի էր Սահակ Պարթև կենդանի ժամանակ, պաշտելի ֆնայ մահից յետոյ էլ: Նրա քարոզները բեղմաւոր սերմեր էին յանել որ պիտի տային առատ պտուղներ. նրա զրուածքները զրական մի նոր ճանապարհ էին հարթել որով պիտի ընթանային աշակերտները:

Անցան տարիներ: Հայոց զրականութիւնը ծաղկել սկսեց, բայց միշտ գործածութեան մէջ ֆնացին Սահակ Պարթևի աշխատութիւնները:

Եւ քանի հնչում է հայկական լեզուն, քանի գոյութիւնունի հայ ժողովուրդը, նա միշտ երախտագիտութեամբ պիտի յիշէ Սահակ Պարթևի անունը. ակնածութեամբ պիտի զնահատէ նրա բազմակողմանի գործերը:

ՄԵՐ ԱՂԲԻՒՆԵՐԸ

1. Ո՞վսէս Խորենացի— «Պատմ. Հայոց»
2. Վաղար Փարպեցի— «Պատմութիւն Հայոց և Աշանաց Ամմիկոնեանի»:
3. Կորիւն վարդապետ— «Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Անորոպայ»:
4. Ո. Պալասանեան— «Պատմ. Հայոց»:
5. Ե. Ո. Գարագաշեան— «Յննական պատմութիւն Հայոց» մասն դ.
6. Ո. Վ. Ո՞ուրադեանց— «Պատմութիւն Հայատանեաց առաքելական սուրբ եկեղեցւոյ»:
7. Յուսիկ Վ. Ո՞վսիսիանց— «Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցւոյ պատմութիւն»:
8. Կ. Գ. Օարբանալեան— «Հայկական հին գարութեան պատմութիւնը»:
9. Կ. Յով. Վ. Ժորոս— «Հայկական Հայութիւնը»:



ՀՅ

ՀՀ Ազգային գրադարան



NL0174217

9102

